ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5–Ի N 574-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ)

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 5–ի N 574-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ուսումնասիրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից: Ողջունելի է, որ Նախագիծն արտացոլում է այն խնդիրները և սկզբունքային հարցերը կարգավորելուն, որոնք մշտապես բարձրացվել են Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ընթացքում և արձանագրվել են ինչպես ձերբակալվածներին պահելու վայրերում (այսուհետ՝ ՁՊՎ) կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման կողմից կատարված այցերն ամփոփող տեղեկանքներում, այնպես էլ Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցներում:

Ուսումնասիրության արդյունքներով՝ Նախագծի վերաբերյալ նկատառումները հանգում են հետևյալին.

1. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 1-ին կետը նախատեսում է ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի կարգավորման առարկան, որտեղ կալանավորված և դատապարտված անձանց համար Հավելվածի շրջանակներում օգտագործման նպատակով սահմանվում է մեկ ընդհանուր հասկացություն՝ «կալանավորված» անձ:

Հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ *«ՁՊՎ-ում կալանավորված անձանց պահելու հետ կապված սույն կանոնակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են կալանավորվածներին պահելու վայրի ներքին կանոնակարգով»*: Հաշվի առնելով, որ Հավելվածի 1-ին կետի համաձայն՝ իրավական ակտում «կալանավորված» եզրույթը ենթադրում է ինչպես կալանավորված, այնպես էլ դատապարտված անձանց՝ անհրաժեշտ է դրույթում «կալանավորվածներին պահելու վայրի» բառերից հետո լրացնել «և ուղղիչ հիմնարկների» բառերը:

2. Հավելվածի 7-րդ կետը սահմանում է անձանց ՁՊՎ ընդունելու հիմքերը՝ ձերբակալման արձանագրությունը, ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշումը: Հավելվածով, սակայն, չեն կարգավորվում այն դեպքերը, երբ անհրաժեշտություն է առաջանում անձին տեղափոխել և ընդունել մեկ այլ ՁՊՎ՝ կապված տվյալ ՁՊՎ-ի հագեցվածության կամ, օրինակ, անձանց անջատ պահելու կանոնների հետ: Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ընթացքում արձանագրվել են այնպիսի դեպքեր, երբ ձերբակալված կամ կալանավորված անձը տեղափոխվել է ՁՊՎ-ից մեկ այլ ՁՊՎ, քանի որ այնտեղ պահվել են նույն քրեական գործի շրջանակներում ձերբակալված կամ կալանավորված այլ անձինք: Հետևաբար, գտնում ենք, որ Նախագծով պետք է կարգավորել նաև անձանց ՁՊՎ-ից մեկ այլ ՁՊՎ տեղափոխելու կամ ՁՊՎ վերոնշյալ և այլ պատճառներով չընդունելու հիմքերը:

3. Հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ *ՁՊՎ ընդունվող անձինք ենթարկվում են մատնադրոշման (...) և լուսանկարման, անհրաժեշտության դեպքում՝ սանիտարական մշակման:* Հավելվածի 18-րդ կետի համաձայն՝ *անձնական խուզարկությունից առաջ ՁՊՎ-ի ծառայողի կողմից առաջարկվում է ինքնակամ ներկայացնել խուզարկվողի մոտ գտնվող իրերը և առարկաները, իսկ արգելված իրերի կամ առարկաների առկայության դեպքում՝ դրանք ինքնակամ հանձնել, և ինքնակամ չհանձնելու դեպքում կատարվում է հարկադիր կարգով*: Նշված դրույթներն ամրագրում եմ ՁՊՎ ընդունվող անձանց համար պարտադիր պայմաններ, սակայն դրանց չկատարման պարագայում նշված գործողությունները (մատնադրոշմ վերցնելը, անձնական իրեր վերցնելը) հարկադիր կերպով կատարելու վերաբերյալ Նախագծում որևէ կարգ կամ կանոնակարգող նորմեր առկա չեն, ինչը խնդրահարույց է, քանի որ պաշտոնատար անձի կողմից ուժի կիրառմամբ ցանկացած գործողություն կատարելը պետք է հիմնված լինի օրենսդրությամբ, լինի անհրաժեշտ և համաչափ:

4. Հավելվածի 14-ից 16-րդ կետերով նախատեսվում են ՁՊՎ ընդունվող անձանց բժշկական զննության ենթարկելու վերաբերյալ դրույթներ: Մասնավորապես՝ Հավելվածի 14-րդ կետը սահմանում է, որ *հերթափոխի ավագի կողմից հրավիրված բուժաշխատողը ՁՊՎ ընդունվող անձանց ենթարկում է բուժզննության, որին կարող է մասնակցել նաև ՁՊՎ ընդունվող անձի ընտրած բժիշկը*: Դրույթը, սակայն, չի հստակեցնում հերթափոխի ավագի կողմից բուժաշխատող հրավիրելու հստակ ժամանակահատված, հստակ չէ, թե ինչ

բուժաշխատող պետք է հրավիրվի (շտապ բժշկական օգնության ծառայություն, առողջության առաջնային պահպանման տարածքային բժշկական կենտրոններ): Հարկ է նշել նաև, որ Երևանի ՀՊՎ-ում առկա է բուժանձնակազմ, և հարց է առաջանում, թե արդյոք ՀՊՎ-ի բուժանձնակազմն իրականացնելու է ՀՊՎ ընդունվող անձի բժշկական զննություն, թե՝ ոչ: Հաշվի առնելով, որ պրակտիկայում որոշ ՀՊՎ-ներում անձանց բժշկական զննության նպատակով հրավիրված շտապ բժշկական օգնության ծառայությունը ժամանում է իրարից տարբերվող ժամկետներում՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է ամրագրել հերթափոխի ավագի կողմից ՀՊՎ անձ մուտք գործելու պահին շտապ բժշկական օգնության ծառայություն **անմիջապես** հրավիրելու և դրա մասին արձանագրություն կատարելու մասին պարտականություն:

Հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ *բուժզննության արդյունքները բուժաշխատողի կողմից գրանցվում են Հն 12 գրանցամատյանում, իսկ վարչակազմի կողմից՝ անձնական գործում, և դրա մասին վարչակազմը իրազեկում է պահվող անձին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին*: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեն (այսուհետ՝ ԽԿԿ) անդրադարձել է ՀՊՎ-ներում բժշկական զննության և դրա արդյունքների գաղտնիության հարցին: Մասնավորապես՝ ԽԿԿ-ն շեշտել է, որ *անհրաժեշտ է խստորեն պահպանել բժշկական փաստաթղթերի գաղտնիությունը:* Դրա հետ մեկտեղ, ԽԿԿ-ն նշել է, որ *բժշկական անձնակազմը կարող է ազատությունից զրկված անձի առողջական վիճակի մասին տեղեկատվություն տրամադրել ՀՊՎ-ի ծառայողներին, սակայն տեղեկատվությունը պետք է սահմանափակված լինի այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ազատությունից զրկված անձի կամ այլ անձանց համար վտանգավոր ռիսկերը կանխարգելելու համար, եթե ազատությունից զրկված անձը լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու համաձայնություն չի ներկայացնում:*

Հետևաբար, անհրաժեշտ է սահմանափակել ՀՊՎ-ի ծառայողների հասանելիությունը բժշկական փաստաթղթավորմանը, և բացառել նրանց կողմից բժշկական տեղեկատվության արձանագրումն անձնական գործում կամ ցանկացած այլ փաստաթղթում:

5. Հավելվածը չի սահմանում նախնական բժշկական զննության որևէ կարգ, իսկ արդյունքների մասով Հավելվածի 16-րդ կետը միայն ամրագրում է բուժաշխատողի կողմից

զննության արդյունքները ՁԵ 12 մատյանում արձանագրելու պահանջը: Այնուհանդերձ, ազատությունից զրկման վայր մուտք գործելիս նախնական բժշկական զննությունը, դրա անցկացման կարգը, դրա արդյունքում կազմված արձանագրության բովանդակությունը, ինչպես նաև նշված տեղեկատվության փոխանցումը պատշաճ մարմնին անչափ կարևոր են խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման տեսանկյունից:

Այս կապակցությամբ, Հայաստանի վերաբերյալ 2016 թվականի զեկույցում ԽԿԿ-ն շեշտել է, որ *անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որ ՁՊՎ-ներում պահվող անձանց բժշկական զննության արդյունքում կազմված արձանագրությունները պարունակեն (i) տվյալ անձի կողմից ներկայացված հայտարարությունները, որոնք առնչվում են բժշկական զննությանը (այդ թվում՝ իր առողջական վիճակի վերաբերյալ իր սեփական նկարագրությունը և վատ վերաբերմունքի մասին ցանկացած հաղորդում), (ii) համապարփակ զննության վրա հիմնված օբյեկտիվ բժշկական եզրակացությունների ամբողջական հաշվետվությունը և (iii) բուժաշխատողի դիտարկումները՝ (i) և (ii) կետերի հիման վրա՝ նշելով ներկայացված ցանկացած հայտարարության և օբյեկտիվ բժշկական եզրակացությունների միջև համապատասխանությունը:*

Դրա հետ մեկտեղ, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության մասին» ՄԱԿ-ի 2004 թվականի արձանագրությունը պարունակում է բժշկական զննության և արձանագրման ուղեցույց և ձևաթղթեր, որոնց լրացումը բուժաշխատողի կողմից հանդիսանում է խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների կանխարգելման, ինչպես նաև արդյունավետ քննության անցկացման կարևոր երաշխիք:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ամրագրել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դրսևորման այլ ձևերի վերաբերյալ անձի հայտարարություն կամ բժշկական եզրակացության պարագայում նշված տեղեկատվությունը պատշաճ մարմնին փոխանցելու բուժաշխատողի պարտականությունը: Օրինակ, նմանատիպ կարգավորում է պարունակում ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշումը, որը կարգավորում է կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը: Նշված որոշումը ՀՀ կառավարության կողմից ենթարկվել է փոփոխության 2019 թվականի օգոստոսի 15-ին: Որոշման հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ *եթե բժշկական զննության արդյունքում հայտնաբերված մարմնական վնասվածքը կամ առողջական վիճակի*

վերաբերյալ զանգատը, ըստ կալանավորված անձի կամ դատապարտյալի հայտարարության, հետևանք է նրա նկատմամբ հանցագործության հատկանիշներ պարունակող (կամ) խոշտանգման բնույթ ունեցող որևէ արարքի, ապա բժշկական զննություն իրականացնող բժիշկն արձանագրությունը լրացնելուց հետո դրա մասին անհապաղ տեղեկացնում է ՊՈԱԿ-ի տնօրենին՝ անմիջապես նրան ուղարկելով նաև արձանագրությունը, իսկ ՊՈԱԿ-ի տնօրենն իր հերթին խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի մասին բժշկական արձանագրությունն ստանալուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, փակ ծրարով այն գրավոր փոխանցում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Նախագծով կարգավորվել նաև բժշկական զննության կարգը, արձանագրության կազմման և դրա ընթացքի հետ կապված հարցերը՝ նկատի ունենալով խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ դրսևորումների կանխարգելման կապակցությամբ միջազգային չափանիշները:

6. Հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ձերբակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ՝ (…) որում այլ տեղեկությունների և փաստաթղթերի հետ միասին ներառվում է նաև անձի անձնական հաշվի գումարի շարժը, սակայն Նախագծով չեն կարգավորվում ձերբակալված անձի գումարի հաշվարկման, դրա պահպանման, ինչպես նաև անձնական հաշվի վարման ընթացակարգերը: Հավելվածին կից Ձև 7-ը նախատեսում է անձնական հաշվի և պահվող անձնի անձնական գումարի շարժի նախահաշվարկի ձևը: Նշված ձևում առկա է լրացման ենթակա աղյուսակ հետևյալ սյունակներով՝ «հ/հ», «ստացման աղբյուր», «պահվող անձի գումարի ծախսի լիմիտ», «ծախսը», «մնացորդը» և «ստորագրություն մնացորդը հաստատելու մասին»: Հասկանալի չէ, թե ինչ տեղեկատվություն է պահանջվում լրացնել «ստացման աղբյուր» սյունակի ներքո, արդյոք դա ենթադրում է ՁՊՎ ընդունվող անձի պարտականություն հայտնելու իր մոտ առկա գումարի աղբյուրների մասին: Անհասկանալի է նաև «պահվող անձի գումարի ծախսի լիմիտ» հասկացությունը՝ հաշվի առնելով, որ ո՛չ Նախագծով, ոչ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ ձերբակալվածների կողմից օգտագործման գումարի առավելագույն չափ:

7. Հավելվածի 20-րդ կետով նախատեսվում է *պահվող անձինք անձնական խուզարկության և մարմնի արտաքին զննության են ենթարկվում նաև ՁՊՎ-ից ազատվելիս, տարածքից իրավական ցանկացած այլ հիմքով դուրս գալիս, տեսակցությունից, փաստաբանի*

կամ պաշտպանի հետ հանդիպելուց և զբոսանքից առաջ ու հետո: Ըստ էության Նախագծով գործող կարգավորման մեջ լրացվել է մարմնի արտաքին զննության ենթարկելու պահանջը, սակայն պարզ չէ, թե մարմնի արտաքին զննությունն ինչ կարգով է իրականացվում, արդյոք այն ենթադրում է անձի մերկացում, եթե՝ այո, ապա որքանով է հիմնավոր ՁՊՎ-ի տարածքում տեղաշարժի (տեսակցության, փաստաբանի հետ հանդիպման, զբոսանքի դուրս գալուց առաջ և հետո) յուրաքանչյուր դեպքում ամրագրել անձի մերկացմամբ զննության պահանջ: Հավելվածով կարգավորված չեն նաև անձի կողմից զննության ենթարկվելուց հրաժարվելու հետևանքները:

8. Հավելվածի 23-րդ կետի համաձայն՝ *ՁՊՎ ընդունված անձանց մոտ թողնվում են այն առարկաները, իրերը և սննդամթերքը, որոնք թույլատրվում են պահել նրանց մոտ խցերում՝ սույն կանոնակարգով սահմանված քանակությամբ ու տեսականիով:* Հավելվածի 26-րդ կետը սահմանում է, որ *անձնական խուզարկության ժամանակ առգրավված սննդամթերքը, դրամը, արժեթղթերը, թանկարժեք իրերն ու առարկաները, վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ կարող են փոխանցվել կամ պահվող անձի միջոցների հաշվին ուղարկվել նրա ազգականներին կամ այլ լիազորված անձանց, իսկ ոգելից խմիչքները, խաղաթղթերը և այլ արժեք չներկայացնող արգելված առարկաներն ու իրերն ոչնչացվում են, որի մասին կազմվում է արձանագրություն:* Դրույթի ձևակերպումից պարզ չէ, թե արդյոք քաղաքացիական շրջանառությունից չհանված և անձնական խուզարկության ժամանակ առգրավված սննդամթերք, դրամ, արժեթղթեր, թանկարժեք իրեր ու առարկաներ չհանդիսացող իրերն ու առարկաները կարող են փոխանցվել անձի ազգականներին կամ այլ անձանց: Հարկ է նաև նշել, որ Հավելվածի Զև 4-ով նախատեսված է սննդամթերքի, իրերի և առարկաների ցանկ, որոնք ՁՊՎ-ում պահվող անձինք կարող են ունենալ իրենց մոտ կամ ստանալ հանձնուքով: Նշված ցանկը սպառիչ է, և, ստացվում է, որ դրանում չնշված մյուս բոլոր առարկաները ենթակա են առգրավման: Ուստի, նշված կետում «թանկարժեք իրերն ու» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «այլ» բառը:

Միևնույն ժամանակ, դրույթը ենթադրում է, որ ոգելից խմիչքը հանդիսանում է արժեք չներկայացնող առարկա այն պարագայում, երբ դրա իրական արժեքը կարող է լինել բարձր, կամ առհասարակ հնարավոր չլինի պարզել դրա իրական արժեքը, ինչպես նաև այն կարող է արժեքավոր հանդիսանալ ազատությունից զրկված անձի համար (հավաքածուի մաս, նվեր և այլն), ինչպիսի պարագայում դրա ոչնչացումը խնդրահարույց է:

Հարկ է նշել, որ դրույթի տառացի մեկնաբանությունը ենթադրում է նաև առգրավված իրերի ու առարկաների փոխանցումն ազատությունից զրկված անձի ազգականներին կամ այլ լիազորված անձանց **առանց ազատությունից զրկված անձի համաձայնության** այն պարագայում, երբ առկա է վարույթն իրականացնող մարմնի թույլտվությունը: Նման ձևակերպումը չափազանց մտահոգիչ է, ինչի կապակցությամբ Հավելվածում պետք է իրականացնել համապատասխան փոփոխություն: Անձին պատկանող գույքը չի կարող փոխանցվել այլ անձի առանց նրա համաձայնության, բացառությամբ՝ քրեական վարույթի շրջանակներում առգրավման և օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում ու կարգով:

Քննարկվող կետի համաձայն՝ համապատասխան հիմքերի առկայության դեպքում իրերը կարող են փոխանցվել ազատությունից զրկված անձի *ազգականներին կամ այլ լիազորված անձանց*: Սակայն, պարզ չէ, թե դրույթի իմաստով ով է հանդիսանում լիազորված անձ, ինչ կարգով և ինչի համար է վերջինս լիազորված: Տվյալ պարագայում ՀՊՎ-ում ազատությունից զրկված անձին պատկանող առգրավված իրերի և առարկաների փոխանցումը ցանկանացած անձի (բացառությամբ՝ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ վարույթն իրականացնող մարմնի) պետք է հանդիսանա ազատությունից զրկված անձի ազատ կամքի դրսևորումը՝ իր սեփականությունն ինքնուրույն տնօրինելու ձևով: Հետևաբար, հասկանալի չէ այս պարագայում ազատությունից զրկված անձի իրերը միայն ազգականներին և լիազորված անձանց փոխանցելու սահմանափակման անհրաժեշտությունը, քանի որ կարող են լինել դեպքեր, երբ անձն իր գույքի նույնիսկ ժամանակավոր տիրապետումը չվստահի իր ազգականներին, և ցանկություն հայտնի այն փոխանցել ընկերոջը կամ ազգական չհանդիսացող այլ անձանց:

Վերոգրյալի լույսի ներքո՝ նշված կարգավորումներն ունեն լրամշակելու անհրաժեշտություն:

9. Հավելվածի 27-րդ կետի համաձայն՝ *ՀՊՎ ընդունվող անձի անձնական խուզարկությունից, իրերի զննությունից, բուժզննությունից և սանիտարական մշակումից հետո հերթափոխի ավագը անձին տեղեկացնում է նրա իրավունքների և պարտականությունների, ՀՊՎ-ի ներքին կանոնակարգի պահանջների և սահմանված կարգի խախտման համար նախատեսված պատասխանատվության, նրա նկատմամբ հսկողություն իրականացնելու համար առկա տեխնիկական միջոցներ, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն գործադրելու հնարավոր դեպքերի մասին, որի վերաբերյալ կազմվում է Ձև 19 տեղեկանքը*:

Հաշվի առնելով, որ ՁՊՎ-ներ կարող են ընդունվել նաև օտարերկրյա քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք, ոչ տառաճանաչ, խուլ և համր անձինք՝ անհրաժեշտ է Հավելվածում նախատեսել անձին իր իրավունքների և պարտականությունների մասին իրեն հասկանալի լեզվով գրավոր և բանավոր կերպով իրազեկելու պարտականություն:

10. Հավելվածի 28-րդ կետը նախատեսում է ՁՊՎ ընդունվող անձանց անհատական օգտագործման նպատակով ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում տրամադրվող պարագաների ցանկը: Հաշվի առնելով անձնական հիգիենայի պահպանման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք նշված ցանկով նախատեսել նաև սրբիչ, ատամի խոզանակ և մածուկ, իսկ բողոքները և դիմումները խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) հասցեագրելու նպատակով՝ նաև ծրար:

11. Հավելվածի 30-րդ կետի համաձայն՝ *անձնական հիգիենայի համար պահվող անձինք ապահովվում են տաք ջրով և մինչև 15 րոպե տևողությամբ ցնցուղով լոգանք ընդունելու հնարավորությամբ,* սակայն պարզ չէ, թե ինչ հիմնավորմամբ է նախատեսված և նախատեսվում ՁՊՎ-ում պահվող անձանց լոգանքի ընդունման համար առավելագույնը 15 րոպեով սահմանափակելը: Դրա հետ մեկտեղ, դրույթից հստակ չէ, թե ՁՊՎ-ում որքան հաճախականությամբ է հնարավոր լոգանք ընդունել՝ դրա անհիմն սահմանափակման հնարավորությունը բացառելու նպատակով:

12. Հավելվածի 30-րդ կետը նախատեսում է, որ սպիտակեղենի և անկողնային պարագաների լվացման համար ՁՊՎ-ներն ապահովվում են լվացքի մեքենայով և լվացող ու ախտահանող նյութերով: Այս կապակցությամբ պետք է ընդգծել, որ որոշ ՁՊՎ-ներ լվացքը կազմակերպում են այլ կազմակերպությունների միջոցով պայմանագրերի հիման վրա: Գտնում ենք, որ լվացքի կազմակերպման այդ եղանակը նույնպես պետք է ամրագրվի Հավելվածում: Ինչ վերաբերում է սպիտակեղենի և անկողնային պարագաների լվացմանը, հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշտապես բարձրացվել է, որ հաշվի առնելով, որ ՁՊՎ-ներ մուտք են գործում և պահվում ազատությունից զրկված բազմաթիվ անձինք, ովքեր կարող են լինել տարբեր վարակիչ հիվանդությունների վարակակիր, անհրաժեշտ է մշակել ՁՊՎ-ներում ախտահանման միասնական ձև՝ նախատեսելով նաև անկողնային պարագաների և սպիտակեղենի ախտահանման չափանիշներ, ինչը կբացառի վարակիչ հիվանդությունների տարածման հնարավորությունը:

13. Հավելվածի 32-րդ կետը սահմանում է, որ *պահվող անձն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ, չարգելված առարկաներ՝ համաձայն Զև 4-ի, և սննդամթերքի և առաջին անհրաժեշտության առարկաներ ու իրեր ձեռք բերելու համար պահվող անձը դիմում է ներկայացնում Պետին՝ համաձայն Զև 5-ի*: Նախագիծը, սակայն, չի կարգավորում, թե նշված դիմումը ստանալուց հետո ինչ ընթացակարգով է իրականացվում անձին անհրաժեշտ առարկաների, իրերի և սննդամթերքի մատակարարումը, ինչ ժամանակահատվածում, ում կողմից: Անհրաժեշտ է նաև քննարկել, թե որքանով է նպատակահարմար ազատությունից զրկված անձի կողմից պահանջված սննդամթերքի, իրերի և առարկաների գնման պարտականությունը ՀՊՎ-ի աշխատակիցներին հանձնելը՝ հաշվի առնելով վերջիններիս աշխատանքային այլ պարտականությունները և ծանրաբեռնվածությունը:

Պետք է նշել նաև, որ Հավելվածին կից Զև 5-ով սահմանված դիմումի ձևում պահանջվող առարկաները և դրանց քանակը նշելու համար նախատեսված աղյուսակին հաջորդում է հետևյալ նախադասությունը՝ «*ստացա* (բաց է թողնված գումարի չափը գրելու նպատակով) *դրամի արժողությամբ սննդամթերք և առաջին անհրաժեշտության իրեր, այդ գումարը խնդրում եմ դուրս գրել իմ անձնական հաշվից*»: Նշված նախադասությունը ենթադրում է, որ ՀՊՎ-ում պահվող անձի կողմից պահանջված ապրանքի դիմաց վճարումը կատարվելու է միայն դրանք փաստացի ձեռք բերելուց և անձին հանձնելուց հետո: Նման պարագայում պարզ չէ, թե ինչպես կամ ում միջոցների հաշվին է իրականացվելու պահանջված ապրանքների գնումը մինչև ազատությունից զրկված անձի անձնական հաշվից դրա դուրսգրումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծում անհրաժեշտ է կարգավորել անձնական հաշվի վարման և դրանում առկա ֆինանսական միջոցների օգտագործման հստակ ընթացակարգը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել նաև, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ *համապատասխան պայմանների առկայության դեպքում կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կալանավորված անձանց ապահովում է բժշկական, հիգիենիկ և կենցաղային լրացուցիչ վճարովի ծառայություններով, և կենցաղային լրացուցիչ վճարովի ծառայությունների ցանկը և դրանց ապահովման կարգը սահմանվում են ներքին կանոնակարգով,* սակայն Նախագծով նախատեսված չէ նման կարգ:

14. Հավելվածի 4-րդ գլուխը նախատեսում է ՀՊՎ-ում պահվող անձանց սննդի տրամադրման և վերջիններիս կողմից սննդից հրաժարվելու դեպքում ձեռնարկվող

միջոցառումների վերաբերյալ կարգավորումներ: Հավելվածի 33-րդ կետի համաձայն՝ *պահվող անձի կողմից սնունդ ընդունելուց հրաժարվելու դեպքում պետը կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և դրա մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին և գերատեսչական վերահսկողություն իրականացնող վերադաս մարմիններին:*

Նշված կետի ձևակերպումից ստացվում է, որ անձի կողմից յուրաքանչյուր դեպքում սնունդ կամ տրամադրված սննդամթերքի մի մասն ընդունելուց հրաժարվելու պարագայում ՁՊՎ-ի վարչակազմը պետք է այդ մասին տեղեկացնի վերոհիշյալ մարմիններին:

Այնուհետև, Հավելվածի 34-րդ կետի համաձայն՝ *պահվող անձի սննդից հրաժարվելու պատճառները պարզելուց հետո ՁՊՎ-ի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում անձի օրինական պահանջները բավարարելու համար*, սակայն 33-րդ կետի ձևակերպումը չի նախատեսում, որ սննդից հրաժարվելը պետք է պարտադիր ուղեկցվի որևէ պահանջով:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման հավելվածի 173.1-րդ կետը տալիս է հացադուլի սահմանումը, որի համաձայն՝ *հացադուլը կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից գիտակցաբար և սեփական կամքով* ***ցանկացած տեսակի սննդամթերքից և (կամ) ջրից որոշակի ժամկետով կամ անժամկետ հրաժարվելն է,*** *ինչի մասին վերջինս բանավոր կամ գրավոր հայտարարություն է ներկայացնում քրեակատարողական հիմնարկի վարչակազմ*:

Այսինքն, գործող օրենսդրությամբ անձի կողմից սննդից հրաժարվելը որպես հացադուլ դիտարկելու համար սահմանվել են մի քանի պարտադիր հատկանիշներ, որոնց թվում են ցանկացած տեսակի սննդամթերքից և (կամ) ջրից հրաժարվելը, հրաժարվելու ժամկետները՝ որոշակի կամ անորոշ, դրա մասին վարչակազմին գրավոր կամ բանավոր տեղեկացնելը:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման հավելվածը նախատեսում է նաև անձի կողմից հացադուլ հայտարարելու կապակցությամբ մի շարք կարևոր կարգավորումներ, ինչպիսիք են՝

1) հացադուլ իրականացնելու հայտարարությունն անմիջապես արձանագրելը,

2) անձի համաձայնությամբ վերջինիս փաստաբանին, մերձավոր ազգականներին կամ այլ անձանց հացադուլ հայտարարելու մասին տեղեկացնելը,

3) բժշկական հսկողության և բժշկական միջամտություն իրականացնելու հիմքերն ու կարգը,

4) հացադուլ հայտարարած անձի նկատմամբ ճնշումներ գործադրելու և հարկադիր կերակրման արգելքները և այլն:

Հավելվածի 35-րդ կետը սահմանում է, որ *սնունդ ընդունելուց հրաժարված պահվող անձը հսկողության է վերցվում բուժաշխատողի կողմից, և սնունդ ընդունելուց հրաժարվելու հետևանքով պահվող անձի կյանքին և առողջությանը սպառնացող անմիջական վտանգ ծագելու դեպքում, բժշկի գրավոր եզրակացությամբ և նրա մասնակցությամբ իրականացվում են համապատասխան բժշկական միջոցառումներ,* իսկ 36-րդ կետի համաձայն՝ պահվող անձի փոխադրումն անհրաժեշտության դեպքում *կարող է իրականացվել բուժաշխատողի ուղեկցությամբ*: Հաշվի առնելով, որ ՁՊՎ-ներում, բացառությամբ Երևանի ՁՊՎ-ի, բուժանձնակազմ ներգրավված չէ՝ Նախագծում անհրաժեշտ է հստակեցնել հացադուլի կապակցությամբ բուժաշխատող հրավիրելու, նրա կողմից պարբերական հսկողություն սահմանելու, ինչպես նաև փոխադրման ժամանակ բուժաշխատողի ուղեկցման և դրա անհրաժեշտության քննարկման մեխանիզմը: Ուստի, Հավելվածն ունի լրամշակման կարիք:

15. Հավելվածի 42-րդ կետով սահմանվում է, թե ինչ է արգելվում ՁՊՎ-ում պահվող անձանց: Այսպես, Հավելվածի 42-րդ կետի 2-րդ ենթակետն արգելում է վերցնել զբոսաբակի տարածքում հայտնված իրեր ու առարկաներ, ինչը խնդրահարույց է, քանի որ որոշ ՁՊՎ-ների զբոսաբակերում ազատությունից զրկված անձանց համար մարմնամարզությամբ զբաղվելու նպատակով տեղադրվում են ծանրաքարեր և գնդակ:

Հավելվածի 42-րդ կետի 7-րդ ենթակետով ազատությունից զրկված անձանց արգելվում է օգտագործել թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, սակայն դրույթը չի ենթադրում որպես բացառություն նման նյութերի (հոգեմետ դեղորայք, մեթադոն) օգտագործումը բժշկական ցուցման հիման վրա, ինչն անձի առողջության պահպանման իրավունքի տեսանկյունից չափազանց խնդրահարույց է:

Հավելվածի 42-րդ կետի 10-րդ ենթակետն ազատությունից զրկված անձանց արգելում է *բղավել կամ այլ կերպ խախտել լռությունը:* Նման ձևակերպումը խնդրահարույց է, քանի որ անձի կողմից լռությունը խախտելը, այն էլ ոչ գիշերային ժամերին, անխուսափելի է:

Լռությունը կարող է խախտվել նաև կանչի կոճակի կամ ռադիոընդունիչի օգտագործման հետևանքով: Ավելին, կարող են լինել դեպքեր, երբ ՁՊՎ-ում կանչի կոճակները չաշխատեն կամ առհասարակ տեղադրված չլինեն, և գիշերային ժամին ազատությունից զրկված անձը ցանկանա օրինական պահանջ ներկայացնել վարչակազմին (առողջական վիճակի վատթարացման կապակցությամբ բժիշկ պահանջել, սանհանգույցից օգտվել, զանգահարել Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին և այլն): Նման դեպքերում վերջինս ստիպված է լինելու բղավել կամ խախտել լռությունը, ինչը Նախագծով արգելվում է:

Հավելվածի 42-րդ կետի 12-րդ ենթակետն ազատությունից զրկված անձանց արգելում է *խցի սանհանգույցի և լուսավորության վերանորոգման աշխատանքներ կատարելը*, սակայն ներկայում ՁՊՎ-ների խցերում սանհանգույցներ առկա չեն, և Հավելվածի 29-րդ կետը խցում ապահովվող գույքի շրջանակներում չի նախատեսում սանհանգույց:

16. Հավելվածի 49-րդ կետի համաձայն՝ *հանրային իշխանության մարմիններին և հասարակական միավորումներին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքներն ուղարկվում են ՁՊՎ-ի վարչակազմի, փաստաբանի կամ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով*: Հավելվածի 50-րդ կետը սահմանում է, որ *քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները, ինչպես նաև ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումներն ու բողոքներն ուղարկվում են հասցեատիրոջը մեկ օրվա ընթացքում*:

Վերոնշյալ դրույթների համադրումից ստացվում է, որ ՁՊՎ-ում պահվող անձը կարող է առաջարկություն, դիմում կամ բողոք ներկայացնել.

1) հանրային իշխանության մարմիններին,

2) հասարակական միավորումներին,

3) քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ ուղղված բողոքները քննության առնելու իրավասություն ունեցող մարմիններին,

4) ՁՊՎ-ի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Այնուամենայնիվ, ՁՊՎ-ում հայտված անձն իրավունք ունի դիմի նաև այլ մարմիններին և կազմակերպություններին, որոնք նշված չեն հիշյալ դրույթներում: Այսպես, ՀՀ Սահմանադրության 52-րդ հոդվածով երաշխավորված է Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու յուրաքանչյուր անձի իրավունքը, և որպես այդ իրավունքի ապահովման երաշխիք՝

ազատությունից զրկման վայրերի վարչակազմերը պետք է քայլեր ձեռնարկեն դիմումը Պաշտպանին անհապաղ, բայց ոչ ուշ քան մեկ օրվա ընթացքում ներկայացնելու ուղղությամբ: Պաշտպանին դիմելու իրավունքից բխում է նաև Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին անարգել զանգահարելու հնարավորությունը, որը նույնպես պետք է ամրագրել Նախագծում:

Դրա հետ մեկտեղ, անձը կարող է դիմում հասցեագրել Հանրային պաշտպանի գրասենյակ իր պաշտպանությունը ստանձնած հանրային պաշտպանի կապակցությամբ առաջացող հարցերը կամ խնդիրները բարձրացնելու նպատակով:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *ձերբակալված և կալանավորված անձն իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի, պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել* ***ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին***: Դրա հետ մեկտեղ, նույն օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ ***դատախազին, դատավորին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, փաստաբանին կամ պաշտպանին, ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին*** *հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով* ***մեկ օրվա*** *ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը*:

Հավելվածի 50-րդ կետը նախատեսում է **միայն** քրեական հետապնդման մարմնի **որոշումների և գործողությունների դեմ** ուղղված բողոքների և ՁՊՎ-ների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունների, դիմումների ու բողոքների ուղարկում, սակայն ՁՊՎ-ում պահվող անձը, ունենալով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ իրավունք ունի հարուցել միջնորդություններ, հայտնել բացարկներ,

կամ հասցեագրել դիմումներ վարույթն իրականացնող մարմնին, որոնք կարող են քրեական հետապնդման մարմնի գործողություններն առհասարակ չվիճարկել: Նախագծով, սակայն, նման փաստաթղթերի հասցեագրումը նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ, Հավելվածի 50-րդ կետը ՁՊՎ-ում պահվող անձի բողոքն առավել արագ (մեկ օրվա ընթացքում) ուղարկելու համար նախատեսում է որպես պարտադիր հատկանիշ քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ լինելը, ինչը պայմանավորված է բողոքի բովանդակությամբ, այլ ոչ թե այն մարմինների շրջանակով, որոնց բողոքը հասցեագրված է: Այս հատկանիշը պարզելու համար ենթադրվում է, որ ՁՊՎ-ի վարչակազմը պետք է ծանոթանա բողոքի բովանդակությանը՝ այն քրեական հետապնդման մարմնի որոշումների և գործողությունների դեմ լինելը պարզելու և դրանից բխող ընթացակարգով ուղարկելու նպատակով, ինչն անթույլատրելի է: **Այս կապակցությամբ պետք է շեշտել, որ իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ իրավասու մարմիններին դիմելու ձերբակալված անձի իրավունքից բխում է դրանց կոնֆիդենցիալ ներկայացումը:**

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է Նախագծում կատարել համապատասխան փոփոխություններ:

17. Հավելվածի 59-րդ կետի համաձայն՝ *պահվող անձի հետ միաժամանակ տեսակցել թույլատրվում է առավելագույնը* ***երեք չափահաս և երեք անչափահաս անձանց****, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել*: Դրույթից ստացվում է, որ եթե ՁՊՎ-ում պահվող անձն ունենա երեքից ավելի երեխաներ, նրանցից յուրաքանչյուրը չի կարող տեսակցել ծնողին, ինչը խնդրահարույց է: Տեսակցությունների արդյունավետ հսկման և տեսակցության սենյակների չափերի հաշվառմամբ նման սահմանափակում նախատեսելու պարագայում, անհրաժեշտ է նման դեպքերի կապակցությամբ նախատեսել տեսակցության տրամադրման առավելագույն ժամկետում յուրաքանչյուր մերձավոր ազգականին, այդ թվում՝ երեխային առանձին կամ թույլատրելի խմբով տեսակցելու հնարավորություն, որպեսզի նման իրավունք ունեցող անձինք զրկված չլինեն տեսակցությունից անձանց թվի մեխանիկական սահմանափակման պատճառով:

18. Հավելվածի 63-րդ կետի համաձայն՝ *տեսակցության եկած, ինչպես նաև պահվող անձանց բացատրվում են նրանց վարքագծի կանոնները* և *նրանք զգուշացվում են նաև ներքին կանոնակարգի պահանջները խախտելու դեպքում օրենքով սահմանված կարգով*

տեսակցությունը վաղաժամկետ դադարեցվելու մասին: Հաշվի առնելով, որ տեսակցության եկած անձինք կարող են լինել օտարերկրացիներ և չտիրապետեն հայոց լեզվին՝ կետում անհրաժեշտ է «անձանց» բառից հետո լրացնել «իրենց հասկանալի լեզվով» բառերը:

19. Հավելվածի 60-րդ կետը սահմանում է, որ *տեսակցությունը տրամադրվում է ժամը 10.00-ից մինչև 21.00-ն ընկած ժամանակահատվածում,* իսկ 66-րդ կետը թվում է բացառությունները: Այսպես, Հավելվածի 66-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ *բացառությամբ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքով կամ սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի՝ արգելվում է մերձավոր ազգականի հետ տեսակցության նպատակով պահվող անձին խցից դուրս բերել օրվա կարգացուցակով հաստատված սննդի ընդունման ժամերին:* Նշված սահմանափակման նպատակը և հիմնավորումը հստակ չէ, այն չի արտացոլվել նաև Նախագծի ընդունման հիմնավորման մեջ: Հարկ է նշել, որ հնարավոր են դեպքեր, երբ անձի համար առավել նախընտրելի լինի տեսակցել իր ազգականի հետ, քան օգտվել տրամադրվող սննդից, կամ անձն առհասարակ հրաժարվի սննդի ընդունումից, սակայն զրկված լինի իր մերձավոր ազգականին տեսակցելու հնարավորությունից՝ օրվա կարգացուցակով սննդի ընդունման ժամ լինելու պատճառով (նախաճաշ՝ 8:00-9:00, ճաշ՝ 14:00-15:00 և ընթրիք՝ 20:00-21:00):

20. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման կողմից ՁՊՎ-ներում իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է դեպք, երբ ՁՊՎ-ի տարբեր խցերում պահվել են ազատությունից զրկված ամուսիններ, ովքեր ցանկություն են հայտնել տեսակցելու միմյանց: Վարույթն իրականացնող մարմնի կողմից նշված անձանց տեսակցությունն արգելելու վերաբերյալ որևէ որոշում կայացված չի եղել, սակայն վերջիններիս տեսակցությունը կազմակերպվել է միայն Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ:

ՁՊՎ-ում պահվող անձանց տեսակցության իրավունքը կարող է սահմանափակվել միայն «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված դեպքում, որի համաձայն՝ *քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին*

պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին: Ուստի, ձերբակալված կամ կալանավորված մերձավոր ազգականների տեսակցության իրավունքը պատշաճ ապահովելու և պրակտիկայում տեսակցությունների անհիմն մերժումը բացառելու նպատակով՝ առաջարկում ենք կալանավորված և ձերբակալված մերձավոր ազգականների տեսակցությունների տրամադրման կարգն ամրագրել Նախագծում:

21. Ինչպես գործող օրենսդրությամբ, այնպես էլ Նախագծում հեռախոսազրույցը հանդիսանում է տեսակցության փոխարինող: Այսպես, Հավելվածի 67-րդ կետի համաձայն՝ *տեսակցությունից հրաժարվելու մասին պահվող անձի գրավոր դիմումի համաձայն տեսակցությունը կարող է փոխարինվել 1 հեռախոսազրույցով՝ մինչև 10 րոպե տևողությամբ, եթե քրեական վարույթն իրականացնող մարմինն այն չի արգելել*: Սակայն, պարզ չէ, թե ինչու է և՛ գործող կարգավորումներ, և՛ Նախագծով մինչև **1 ժամ** տեսակցությանը փոխարինող հեռախոսազրույց ունենալու հնարավորությունը սահմանափակված ընդամենը **10 րոպեով**՝ առավել ևս այն պարագայում, երբ Նախագծի կարգավորումների համաձայն՝ հեռախոսազրույցը, որպես ընդհանուր կանոն, տրամադրվում է անձի միջոցների հաշվին, և միայն միջոցների բացակայության պարագայում է տրամադրվում ոստիկանության տարածքային մարմնի միջոցների հաշվին: Ուստի, առաջարկում ենք քննարկել հեռախոսազրույցի տևողությունը երկարացնելու հարցը: Դրա հետ մեկտեղ, հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու անձի սահմանադրական իրավունքը, ինչպես նաև քրեական վարույթում անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ առաջարկում ենք Հավելվածում առանձնացնել Պաշտպանի աշխատակազմի թեժ-գծի հեռախոսահամարին, ինչպես նաև փաստաբանին զանգահարելու հնարավորությունը տեսակցությանը փոխարինող հեռախոսազրույց ունենալու հնարավորությունից՝ բացառելով Պաշտպանին դիմելու կամ փաստաբանի հետ կապ հաստատելու համար ուղղակի կամ անուղղակի ընթացակարգային խոչընդոտները (հեռախոսազանգի համար գրավոր դիմում ներկայացնելը, տեսակցության հետ այն փոխարինելը և այլն):

22. Հավելվածի 9-րդ գլուխը նախատեսում է հանձնուքներ ընդունելու և հանձնելու կարգը: Հավելվածի 70-րդ կետի համաձայն՝ *այն առարկաների և սննդամթերքի ցանկը, որոնք պահվող անձանց* ***թույլատրվում է ունենալ*** *իրենց մոտ, պահել, ստանալ հանձնուքով կամ ձեռք բերել՝ սահմանվում է սույն կանոնակարգով՝ համաձայն 2և 4-ի:* Հավելվածի 71-րդ կետի համաձայն՝ ***ցանկում նշված առարկաներից և սննդամթերքից բացի այլ առարկաներ****, որոնք*

վտանգ են ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար և կարող են օգտագործվել որպես հանցագործության գործիք, ինչպես նաև խոչընդոտում են անձանց արգելանքի տակ պահելուն՝ ***պահվող անձանց հանձնելն արգելվում է:*** Նշված կետը չի համապատասխանում ինչպես նախորդ կետին, այնպես էլ Հավելվածի Զն 4-ով սահմանված ցանկին, քանի որ ինչպես գործող օրենսդրությամբ, այնպես էլ Նախագծով նախատեսվում է թույլատրված իրերի և առարկաների ցանկ, ուստի այն ինչ նախատեսված չէ այդ ցանկով առհասարակ արգելվում է հանձնել ՁՊՎ-ում պահվող անձին:

Ինքնին թույլատրելի իրերի և առարկաների ցանկի նախատեսումը խնդրահարույց է, քանի որ այն շատ սահմանափակ է և չի կարող լիարժեք բավարարել ՁՊՎ-ում պահվող անձանց պահանջները: Ցանկն ունի 21 կետ, այսինքն՝ 21 տեսակի մթերք, իրեր և առարկաներ, որոնք թույլատրվում են ունենալ կամ հանձնուքով ստանալ, ինչը չափազանց նեղ շրջանակ է և պարունակում է անհեթեթ սահմանափակումներ: Այսպես, մրգերից և բանջարեղենից ցանկով նախատեսված է միայն խնձոր, սխտոր, սոխ և կարտոֆիլ, հետևաբար ՁՊՎ-ում պահվող անձանց արգելվում է որպես հանձնուք ստանալ, օրինակ, տանձ, նարինջ, վարունգ, լոլիկ և բոլոր այլ տեսակի մրգեր և բանջարեղեն, ինչն անհիմն է և գործնականում առհասարակ չի գործում: Դրա հետ մեկտեղ, ցանկում նախատեսված չեն մի շարք անհրաժեշտ իրեր և առարկաներ, օրինակ, բժշկական անհրաժեշտ պարագաներ, լսողական ապարատներ, խոսակցական սարքեր, ֆիքսատորներ, ծնկակալներ, կոնտակտային լինզաների հեղուկ և բազմաթիվ այլ առարկաներ, ինչն արգելելը դրա կարիքն ունեցող անձանց՝ ցանկում դրանց ներառված և կանխատեսված չլինելու պատճառով անթույլատրելի է:

Ցանկում առկա են նաև թույլատրված առարկաների որոշակի սահմանափակումներ, որոնց հիմնավորումը նույնպես պարզ չէ: Օրինակ, ներքնաշորերը, գուլպաները, զուգագուլպաները թույլատրվում են երկու լրակազմից ոչ ավելի քանակությամբ այն դեպքում, երբ անձի անհատական կարիքներից կամ առողջական վիճակի առանձնահատկություններից ելնելով վերջինիս կարող է անհրաժեշտ լինել ավելի հաճախ դրանք փոխել: Թույլատրվում է ունենալ առավելագույնը 2 լուսանկար, իսկ ձեռնափայտը պետք է լինի միայն փայտյա: Ըստ ցանկի՝ թույլատրվում է ունենալ կամ ստանալ հանձնուքով միայն ուսուցանող, կրոնական կամ պարբերական հրատարակչության գրականություն, այն էլ հինգ անվանումից ոչ ավելի: Ստացվում է, որ գեղարվեստական գրականությունն արգելվում է:

Դրա հետ մեկտեղ, քննարկվող ցանկի 9-րդ կետի համաձայն՝ անձնական հիգիենայի թույլատրելի պարագաները՝ տնտեսական և ձեռքի օճառը, հեղուկ օճառը, քսուքները, ատամի խոզանակը, ատամի մածուկը, պլաստմասսայե օճառամանները, սանրը և սափրվելու պարագաները պահվում են ՁՊՎ վարչակազմի մոտ, ինչը չափազանց խնդրահարույց է, քանի որ անհիմն կերպով ՁՊՎ-ում պահվող անձանց անձնական հիգիենայի առօրյա կենցաղային պահպանումը կախվածության մեջ է դնում ՁՊՎ-ի վարչակազմից:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշումն ամրագրում է այն իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկը, որոնք արգելվում են ունենալ կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով: Այսինքն, քրեակատարողական հիմնարկների համար օրենսդրությամբ ամրագրված է **արգելված իրերի ցանկ, և ոչ թե թույլատրված իրերի ցանկ:** Արգելված առարկաների ցանկը թույլատրում է այն ամենն, ինչն արգելված չէ նույն ցանկով: Այսպիսի ցանկի ամրագրումն առավել հիմնավոր է, քանի որ այն պարունակելու է բոլոր այն առարկաները, որոնք հիմնավոր կերպով կարող են վտանգ կամ վտանգավոր ռիսկ կամ սպառնալիք ներկայացնել ազատությունից զրկված անձի, նրա խցակիցների և ազատությունից զրկման ողջ վայրի անվտանգության, ինչպես նաև քրեական վարույթի արդյունավետ քննության համար: Տվյալ պարագայում անհրաժեշտություն չի առաջանա կանխատեսել և նախատեսել բոլոր հնարավոր թույլատրվող առարկաները, որոնք կարևոր նշանակություն ունեն անձի առանձնահատկությունների տեսանկյունից:

23. Հավելվածի 72-րդ կետի համաձայն՝ *հանձնուքի զննությունը կատարվում է այն բերող անձի ներկայությամբ, որի ընթացքում հացամթերքը կտրատվում է 2, 3 մասի, հեղուկները լցվում են ՁՊՎ-ի ապրանքաամանների մեջ, պահածոները բացվում և լցվում են ՁՊՎ-ի ափսեների մեջ, ձկնեղենը, երշիկեղենը կտրատվում են մի քանի մասի, սորուն սննդամթերքը լցվում է այլ ապրանքաամանների մեջ, կոնֆետները, թխվածքաբլիթները և նմանօրինակ այլ սննդամթերք ընդունվում է միայն բաց վիճակում՝ առանց փաթեթավորման*:

Կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում իրականացված մշտադիտարկման արդյունքում Պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրվել է ՁՊՎ-

ներում պահվող անձանց բերված հանձնուքները դանակներով և պատառաքաղներով ստուգելու պրակտիկան: Տեխնիկական հատուկ միջոցները բացակայում են, ինչը համակարգային խնդիր է բոլոր ՁՊՎ-ներում: Արդյունավետ հսկողություն իրականացնելու, ինչպես նաև բերված սնունդը չմասնատելու և փչացնելու նպատակով Պաշտպանի կողմից առաջարկվել է **ՁՊՎ-ներն ապահովել հանձնուքների ստուգման տեխնիկական հատուկ միջոցներով**:

24. Հավելվածի 75-րդ կետը թվում է այն դեպքերը, երբ հանձնուքները չեն ընդունվում և վերադարձվում են բերողին: Դրանք հետևյալ դեպքերն են.

1) *հասցեատեր ձերբակալվածի ազատ արձակման.*

2) հասցեատեր անձի մահվան.

3) սահմանված նորմերին հանձնուքի քաշի անհամապատասխանության.

4) հանձնուքը բերող անձի կողմից համապատասխան փաստաթղթեր չներկայացվելու.

5) հանձնուքի ընդունման դիմումի սխալ ձևակերպման.

6) պահվող անձի կողմից հանձնուքը ստանալուց հրաժարվելու:

Հարկ է նշել, որ նշված ցանկից դուրս են մնացել այն դեպքերը, երբ ձերբակալված անձանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվում կալանավորումը, և վերջիններս առանց ազատ արձակվելու տեղափոխվում են քրեակատարողական հիմնարկ:

Հարկ է անդրադառնալ նաև հանձնուքի ընդունման դիմումի սխալ ձևակերպման հիմքով հանձնուքները չընդունելու կարգավորման հարցին: Մասնավորապես, դրույթից պարզ չէ թե ինչ ձևակերպման սխալի մասին է խոսքը այն պարագայում, երբ Հավելվածի Ձև 10-ը հստակ սահմանում է դիմումի ձևը և լրացման ենթակա հատվածները:

25. Ողջունելի է, որ Պաշտպանի կողմից կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակի շրջանակում բազմիցս բարձրացված՝ նստարանի և աղբամանի կահավորման ու անբարենպաստ եղանակային պայմաններից պաշտպանվելու համար ծածկի սարքավորման հարցերն ամրագրվել են Նախագծում:

Դրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ զբոսաբակերը պետք է հնարավորինս հարմարեցված լինեն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար՝ վերջիններիս զբոսանքի իրավունքն ապահովելու նպատակով, ինչպիսի խնդիրն արձանագրվել է բազմաթիվ ՁՊՎ-ներում:

26. Հավելվածի 94-րդ կետը սահմանում է, որ *գիշերային ժամերին (տեղական ժամանակով ժամը 22.00-06.00-ն) խցերը բացվում են ծայրահեղ անհրաժեշտության*

դեպքերում, ***իսկ պահվող անձինք դուրս են բերվում միայն արտակարգ իրավիճակների դեպքում****, երբ նրանց կյանքին և առողջությանն անմիջական վտանգ է սպառնում, ինչպես նաև, եթե դա կապված է նրանց* ***անհետաձգելի բժշկական օգնություն ցույց տալու կամ ձերբակալված անձի տեսակցությունն իր պաշտպանությունն ստանձնելու նպատակով տեսակցության եկած փաստաբանի կամ իր պաշտպանի հետ ապահովելու համար****:* Ստացվում է, որ ՁՊՎ-ում պահվող անձը ժամը 22:00-ից մինչև ժամը 6:00-ը չի կարող օգտվել սանհանգույցից, ինչը չափազանց խնդրահարույց է:

Հավելվածի 95-րդ կետի համաձայն՝ *գիշերային ժամերին խցերի բացման և պահվող անձանց դուրսբերման ժամանակ պետք է կիրառվեն* ***նախազգուշական հատուկ միջոցներ****՝ ՁՊՎ-ից փախուստի կամ ծառայողի վրա հարձակվելու հնարավորությունը բացառելու համար*: Նախագծում, սակայն, ներկայացված չեն այդ միջոցները, ինչի հետևանքով պարզ չէ, թե նշված կարգավորումն ինչ է ենթադրում. անձանց նախազգուշացում պատասխանատվության և համաչափ ուժի գործադրման վերաբերյալ, թե տեխնիկական միջոցների կիրառում:

27. Հավելվածի 110-րդ կետի համաձայն՝ *խցերի պատերը, առանց որևէ ելուստների և անկյունների, սվաղվում են ցայտուկների շաղախով*: **Խցերում պատերի նշված հարդարման տեսակի հիմնավորումն առհասարակ հասկանալի չէ՝ հաշվի առնելով, որ այն կարող է լրացուցիչ հոգեբանական ճնշում առաջացնել ազատությունից զրկված անձանց վրա, ինչպես նաև հանդիսանալ մարմնական վնասվածքներ ստանալու կամ ինքնավնասում կատարելու միջոց**:

28. Հավելվածի 17-րդ գլուխը նախատեսում է ՁՊՎ-ում պահվող անձանց բուժսպասարկման և հակահամաճարակային պայմանների ապահովման կարգը: Այսպես, 181-րդ կետը սահմանում է, որ *ՁՊՎ-ում չի թույլատրվում պահել հոգեկան, սուր վարակիչ և մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող անձանց, և նշված անձինք շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա Պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություն:* Դրույթի ձևակերպման առնչությամբ առկա են որոշակի խնդիրներ: Այսպես, կետում օգտագործված «և» շաղկապը ենթադրում է, որ անձը չի կարող պահվել ՁՊՎ-ում, եթե ինքն ունի միաժամանակ և՛ հոգեկան, և՛ սուր վարակիչ, և՛ մասնագիտական բուժօգնության կարիք: Մյուս կողմից, դրույթում հիշյալ բառերը «կամ»

շաղկապով առանձնացնելու պարագայում այն ենթադրելու է, որ «հոգեկան բուժօգնության» կարիք ունեցող անձը չի կարող պահվել ՁՊՎ-ում, սակայն ազատությունից զրկված անձանց շրջանակում հոգեբուժական ախտորոշումը և դրա կապակցությամբ նշանակված բուժումը տարածված երևույթներ են: Ուստի, նշված անձինք կամ ցանկացած այլ անձ, ով ունի նույնիսկ ամբուլատոր հոգեբուժական օգնության կարիք, չի կարող պահվել ՁՊՎ-ում: Նույնը վերաբերում է նաև վարակիչ հիվանդությունների դեպքում մասնագիտական բուժօգնության կարիք ունեցող անձանց ՁՊՎ-ում պահելու արգելքին: Հետևաբար, գտնում ենք, որ Հավելվածի 181-րդ կետով սահմանվող ՁՊՎ-ում պահելու արգելքի հիմքը պետք է կապել ստացիոնար և (կամ) անհապաղ բուժօգնության կարիք ունենալու հետ, այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող, վարակիչ հիվանդություններով տառապող կամ ցանկացած այլ անհապաղ և ստացիոնար բուժօգնություն պահանջող դեպքերում:

Հաջորդիվ, Հավելվածի 181-րդ կետը սահմանում է բուժօգնության կարիք ունենալու փաստը հաստատելու վերաբերյալ կարգավորում: Մասնավորապես՝ կետը նախատեսում է, որ *նշված անձինք շտապ բուժօգնության բժշկի գրավոր եզրակացությամբ և դրա հիման վրա Պետի որոշմամբ փոխադրվում են հատուկ մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություն:* Այս կապակցությամբ հարկ է նշել, որ մարզային շտապ բժշկական օգնության ծառայության անձնակազմերը կարող են ներկայացվել միջին բուժանձնակազմի տեսքով, ինչի հետևանքով հնարավոր չլինի բժշկի կողմից ՁՊՎ-ում եզրակացություն ներկայացնելու, և անձի փոխադրումը համապատասխան հիմքի բացակայության պատճառով չկազմակերպվի:

Դրա հետ մեկտեղ, գործնականում կարող են հանդիպել այնպիսի դեպքեր, երբ ձերբակալված անձն իր մոտ ունենա ստացիոնար բուժման ուղեգիր կամ ցուցում, սակայն ձերբակալվելու պատճառով հնարավորություն չունենա ներկայանալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություն: Նախագծում նման դեպքերի համար առանձին կարգավորում նախատեսված չէ:

Միևնույն ժամանակ, հնարավոր են դեպքեր, երբ առողջական վիճակի հիմքով ՁՊՎ-ից մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություն փոխադրված անձի մոտ առկա առողջական խնդիրները չբացառեն ՁՊՎ-ում նրա պահվելու հնարավորությունը, պարզվի, որ անձը չունի ստացիոնար բուժման կարիք, կամ տվյալ պահին առկա չլինի անհապաղ բուժօգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն: Նախագիծը,

սակայն, չի հստակեցնում այդպիսի իրավիճակներում անձին ՀՊՎ վերադարձնելու կարգը, առկա չէ նրան ոստիկանության ծառայողների կողմից ուղեկցելու և հսկելու վերաբերյալ որևէ դրույթ:

Միևնույն ժամանակ, Նախագիծն առհասարակ չի նախատեսում այն դեպքերը, երբ ՀՊՎ-ում պահվող անձի առողջական վիճակը ՀՊՎ-ում վատթարանում է կամ վերջինս իր առողջական վիճակի վերաբերյալ գանգատ է ներկայացնում ՀՊՎ-ի վարչակազմին: Մշտադիտարկումը վկայում է, որ այսպիսի իրավիճակներում ՀՊՎ-ների վարչակազմերը գործում են տարբեր կերպ. հրավիրվում է շտապ բժշկական օգնության ծառայություն, որն անհրաժեշտության դեպքում անձին կարող է տեղափոխել բժշկական կենտրոն, կամ ՀՊՎ-ի ծառայողներն ինքնուրույն փորձում են բժշկական օգնություն ցուցաբերել՝ տրամադրելով դեղորայք: Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրացրել է ոստիկանության ծառայողների և, առհասարակ, ցանկացած այլ, ոչ բժիշկ մասնագետների կողմից ազատությունից զրկված անձանց բժշկական օգնություն ցուցաբերելու խնդիրը, դրա վտանգավոր ռիսկերը և հետևանքները: Ուստի, համապատասխան միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով անհրաժեշտ ենք գտնում Նախագծում ամրագրել ՀՊՎ-ում պահվող անձանց բժշկական օգնություն ցուցաբերելու ընթացակարգը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում պահվող անձանց բժշկական հաստատություն տեղափոխելու, ուղեկցելու և վերադարձնելու մասերով:

29. Հավելվածի 185-րդ կետը նախատեսում է, որ *ՀՊՎ-ում ամեն օր անց է կացվում մենախցերի և այլ սենյակների խոնավ մաքրում՝ օգտագործելով ախտահանող միջոցներ, իսկ սննդի պահման սենյակում՝ սննդի յուրաքանչյուր բաժանումից հետո,* սակայն դրույթը չի հստակեցնում, թե ում կողմից են իրականացվում նշված սանիտարահիգիենիկ աշխատանքները: Հավելվածի 89-րդ կետի համաձայն՝ ՀՊՎ-ում պահվող անձինք ևս իրականացնում են խցերի մաքրում, և նշված մաքրման աշխատանքների տարանջատման տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել Հավելվածի 185-րդ կետով նախատեսված միջոցառումների իրականացման պատասխանատուներին՝ բացառելով պահվող անձանց մասնակցությունը հատուկ ախտահանող միջոցներով մաքրման աշխատանքներին:

30. Հավելվածին կից Ձև 9-ով նախատեսված է «ՀՊՎ-ում պահվող անձանց խցերից դուրս բերելու» գրանցամատյանը, որի 3-րդ սյունակում արձանագրվում են խցից «դուրս բերման նպատակը և վայրը»: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների

պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի ստորաբաժանման կողմից ՁՊՎ-ներում իրականացված մշտադիտարկումն ամփոփող տեղեկանքներում մշտապես արձանագրվել է, որ ՁՊՎ-ներում ազատությունից զրկված անձին զբոսանքի կամ տեսակցության համար խցից դուրս բերելու ընթացքում առաջանում է անհրաժեշտություն օգտվել նաև սանհանգույցից, սակայն հիշյալ մատյանում նշվում է միայն խցից դուրս բերելու սկզբնական նպատակը:

Խցից դուրս բերելու հաշվառման մատյանում նշված դեպքերը չարձանագրելը կարող է խնդրահարույց լինել: Օրինակ, կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ ազատությունից զրկված անձը սանհանգույցում ստանա վնասվածք կամ կատարի ինքնավնասում, իսկ մատյանում որպես խցից դուրս բերելու նպատակ նշված լինի զբոսանքը, սակայն չարձանագրվի սանհանգույցից օգտվելու հանգամանքը: Հետևաբար, նման դեպքերում մատյանի ուսումնասիրությունից երևալու է միայն այն, որ ազատությունից զրկված անձը վնասվածքը ստացել է զբոսաբակում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ